Հ. ԱՐԱՄՅԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՆՁԸ

1945 թվականի ամռանը, հայրապետական ընտրությունների կապակցությամբ, Մայր Հայրենիքում եղած ժամանակ, հաճախակի հանդիպումներ էի ունենում արվեստի վաստակավոր գործիչ, քանդակագործ պրոֆ. Արա Սարգսյանի հետ։ Մեր զրույցների հիմնական առանցքն էր կազմում մեր Հայրենիքի հիանալի վերելքը արվեստի բնագավառում։ Այդ զրույցներից մեկի ընթացքին էր, որ պրոֆ. Արա Սարգսյանը հաղորդեց ինձ, թե Սովետական Հայաստանը հենց 1945 տարվա աշնանը կօժտվի գեղարվեստի մի բարձրագույն ուսումնարանով։

Քիչ ժամանակ հետո, արտատպման հասած հայաստանյան թերթերը տեղեկացրին թե, իրո՛ք, Գեղարվեստի ինստիտուտը բացված է Երևանում, պրոֆ. Արա Սարգսյանի ղեկավարությամբ։ Սփյուռքի հայությունը այդ լուրն ընդունեց մեծ հրճվանքով և հպարտությամբ։

Մոտ օրերս ինձ բախտ վիճակվեց ողջունելու արդեն իսկ իր գոյության առաջին հընգամյակը բոլորած այդ Ինստիտուտի առաջին հունձը՝ իրենց դիպլոմային աշխատանքների պաշտպանության հանդեսի՝ Ինստիտուտի առաջին բերկրալի հնձատոնի կապակցությամբ։

Այսօր ցանկանում եմ իմ հրճվանքին հաղորդակից դարձնել «Էջմիածին» ամսագրի ընթերցողներին, հատկապես հեռավոր սփյուռքային ընթերցողներին։

***

Գեղարվեստի ինստիտուտն հաստատված է Աբովյան պողոտայի վրա, համալսարանական ոստանում, վարդագույն տուֆից մի ընդարձակ ու շքեղ շենքում։

Դիրեկտոր պրոֆ. Արա Սարգսյանը ջերմ սիրալիրությամբ ընդունում է ինձ նկարներով ու արձաններով զարդարուն իր սիրունատես առանձնասենյակում և ընդառաջում Ինստիտուտի դրվածքի և ներքին աշխատանքի հետ մոտից ծանոթանալու իմ ցանկությանը։ Դիրեկտորի առանձնասենյակումն են այդ պահին Ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական կազմից մի քանիսը, որոնց հետ դիրեկտորը ծանոթացնում է մեզ մի առ մի։

Ահա պրոֆեսորա-դասախոսական կազմից մի քանի հոգի. Քանդակագործական ամբիոնի վարիչն է ինք՝ դիրեկտոր պրոֆ. Արա Սարգսյանը, Գունանկարչական ամբիոնի վարիչ՝ ժողովրդական նկարիչ պրոֆ. Գ. Գյուրջյանը, Գրաֆիկայի ամբիոնի վարիչ՝ ժողովրդական նկարիչ պրոֆ. Հ. Կոջոյանը, Գծանկարի ամբիոնի վարիչ՝ դոցենտ Վ. Շաքարյանը, Արվեստի պատմության ամբիոնի վարիչ՝ արվեստի տեսաբան Եղիշե Մարտիկյանը։ Ինստիտուտում դասախոսում են, բացի հիշված ամբիոնի վարիչներից, հետևյալները. ժողովրդական նկարիչ ակադեմիկոս պրոֆ. Մ. Սարյանը, արվեստի վաստակավոր գործիչ, քանդակագործ Ս. Ստեփանյանը,— որի ձեռակերտ Խ. Աբովյանի հոյակապ արձանը, ասե՛նք անցողակի, մի քանի շաբաթից ի վեր զարդարում է Աբովյան պողոտայի վերին ծայրամասը՝ Ինստիտուտի ճիշտ հանդիպակաց, Ինստիտուտի լուսամուտներից տեսանելի,— քանդակագործ Գր. Ահարոնյանը, նկարիչներ Էդ. Իսաբեկյանը, Բ. Քոլոզյանը և ուրիշները։

— Շուտով, մի քանի շաբաթից, կունենանք և մեր առաջին շրջանավարտների հույլը,—ասում է դիրեկտորը հրճվալից ժպիտը դեմքին,—և դա կլինի մեր նվերը Հայաստանին՝ Սովետական կարգերի հաստատման պանծալի երեսնամյակի առթիվ։

— Ի՞նչպես,— զարմացած ընդհատում եմ ես նրա խոսքը։— Չասացի՞ք, թե Ինստիտուտում ուսման տևողությունն է հինգ տարի...։ Արդ, գիտենք թե Ինստիտուտը բացվեց 1945 թվականի հոկտեմբերի 1-ին, միայն հինգ տարի առաջ։

— Ահա թե ի՛նչպես. Երևանում վաղուց կար կերպարվեստի միջնակարգ ուսումնարան— նա կա հիմա էլ, Մայիսյան փողոցում։ —Այդ ուսումնարանը ավարտածներից հենց առաջին տարին կարողացանք կազմել միաժամանակ երկու կուրս— առաջին և երկրորդ կուրսեր. երկրորդ կուրսը կազմվեց այն տղաներից և աղջիկներից, որ ուսումնարանն ավարտելուց հետո մեկ-երկու տարի աշխատել էին դուրսը, աշակերտելով հայտնի վարպետների։ Ահա այդ առաջին տարվա երկրորդ կուրսում ընդունված ուսանողներն են, որ կազմում են մեր այս տարվա շրջանավարտները, մեր Ինստիտուտի անդրանիկ հունձը, թվով 26 անձ։

Ինստիտուտի հիմնադրման տարին, այնտեղ ընդգրկվեցին ընդամենը 75 ուսանող, փոխ այժմ ուսանողների թիվը բարձրացել է 151-ի։ Այդ ուսանողները, ինչպես բարձրագույն ուսումնական հաստատությունների և տեխնիկումների բոլոր ուսանողները, ապահովվում են պետական թոշակով։ Ավելի՛ն. նրանք Ինստիտուտից ձրիաբար ստանում են իրենց աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր նյութերը։ Նրանք Ինստիտուտի ծախսով գործուղվում են Մոսկվա, Լենինգրադ և Մոսկվայի այլ վայրերը՝ կերպարվեստի համաշխարհային հայտնի վարպետների գործերը մոտիկից ուսումնասիրելու։ Ինստիտուտի ծախսով դարձյալ, ամեն ամառ, մի ամսով և ավելի ժամանակով, ուղարկվում են Հայաստանի նկարագեղ վայրերը, գյուղատնտեսական և արդյունաբերական կենտրոնները. և՛ կազդուրվում են, և՛ ուսումնասիրություններ կատարում։ Յուրաքանչյուր շրջանավարտի վրա Պետությունը ծախսում է տասնյակ հազարավոր ռուբլի։ Արտասահմանից եկածներիս հայտնի է, որ բացի Սովետական Պետությունից ուրիշ ոչ մեկ պետություն նման հոգատար վերաբերմունք

Շրջանավարտների մի խումբ իրենց ավարտական աշխատանքներով

ցույց չի տալիս հանդեպ իր երիտասարդ սերնդին։

— Ուսանողական ցուցահանդեսներ տըրվո՞ւմ են,— հարց եմ տալիս դիրեկտորին։

— Այո՛, ամեն տարի, սկսյալ 1946 թվականից։ Նկարիչների տան պատկերասրահում կազմակերպված այդ ցուցահանդեսները հանդիսանում են մեր ուսանողության աշխատանքի և առաջընթացի ստուգատեսը տվյալ տարում։

Դիրեկտորի առաջնորդությամբ այցելում ենք քանդակագործական, Գրաֆիկայի և Գունանկարչական ֆակուլտետների լսարաններն ու արվեստանոցները, և տեսնում ուսանողներին իրենց աշխատանքում։ Ի՞նչպիսի հարմարություններով շրջապատված են նրանք, ի՞նչպիսի պերճանքով։ Նման առավելությունների շռայլանքը, արտատահմանյան պայմաններում, մատչելի է իշխանությունների, մեծահարուստ ընտանիքների զավակներին միայն։ Գեղանկարչական մեկ արվեստանոցում, ուսանողները նկարում էին մի հոյանի կնոջ։ Քանդակագործական արվեստանոցներից մեկում, քանդակում էին մի հուժկու բանվորի հանգստի պահը, աշխատանքից հետո...։

***

Դիպլոմային աշխատանքների պաշտպանության հանդեսը տևեց ամբողջ երեք օր, օրական երկու նիստերով, Նկարիչների տան ընդարձակ դահլիճում, հարյուրավոր հանդիսականների ներկայությամբ — շրջանավարտների ծնողներ և հարազատներ, Ինստիտուտի ուսանողներ, դասախոսներ, բանվորներ, կոլխոզնիկներ, գանազան բնագավառների աշխատող արվեստագետներ և մտավորականներ։

26 շրջանավարտներից— 14 գեղանկարիչ, 5 գրաֆիկ, 4 թատերական նկարիչ և 3 քանդակագործ— յուրաքանչյուրը պատրաստել էր խոշոր կտավի մի կոմպոզիցիոն աշխատանք։ Դրանց հարակից և դրանց կապակցված՝ յուրաքանչյուր շրջանավարտ հորինել էր շուրջ մի տասնյակ էտյուդներ։

Խոշոր կտավի նման կոմպոզիցիոն աշխատանքների կենսագործման համար ավարտող ուսանողները կարողացել են հաջողապես լուծել կերպարվեստի տեխնիկայի հետ կապակցված բոլոր խնդիրներն ու դժվարությունները, բոլորն էլ, իհարկե ոչ հավասար չափով, բայց անպայման վարժ են անատոմիկայի, պերսպեկտիվի, գույների և երանգների ներդաշնակ գործածության, լույսի և ստվերի խաղերի խելոք օգտագործման մեջ։ Բոլորն ընտրել են այժմեական, շնորհակալ թեմաներ՝ մեր ժողովրդի առօրյայից կամ նրա սրտին շատ մոտիկ, նրան հուզմամբ համակող։ Մտահղացումից գործադրություն ձգված ճանապարհը շատերը կարողացել են կտրել-անցնել վարպետությամբ, ստեղծագործելով երկեր, որոնք անպայման տեղ կունենան մեր կերպարվեստի թանգարանում, կարժանանա այդ պատվին։

Գրախոսականների ընթերցումից և ժյուրիի անդամների անհատական և հավաքական գնահատականներից առաջ, ներկա եղող հասարակությունը, որի մեջ գեղարվեստական կուլտուրա և հասկացողություն ունեցող անձերի թիվը զգալի տոկոս է կազմում, տվեց իր հավանությունն ու համակրությունը, նախ լռելյայն, ամեն մեկն իր մտքում, հետո՝ հրապարակով, ելույթներով և խանդավառ ծափողջույններով։

Ժյուրին կազմված էր հետևյալ անձնավորություններից. պրոֆ. Զ. Բաշինջաղյան (նախագահ), պրոֆ. Արա Սարգսյան, դոցենտ Վ. Շաքարյան, պրոֆ. Գ. Գյուրջյան, նկարիչ Էդ. Իսաբեկյան, նկարիչ Հ. Զարդարյան, ժողովրդական արտիստ, դերասան թատերագիր Վ. Վաղարշյան և արվեստի տեսաբան, Պետական կերպարվեստի թանգարանի դիրեկտորի տեղակալ Վ. Հարությունյան։ Յուրաքանչյուր դիպլոմային աշխատանք բերվեց ժյուրիի և հասարակության աչքի առաջ, երկարատև քննարկման ենթարկվեց, գնահատական ստացավ։ Ժյուրին միաձայնությամբ բոլոր 26 երիտասարդներին արժանի հռչակեց շրջանավարտության վկայականին։

Ժյուրիի վճռից հետո, շրջանավարտների երկերը մի ամբողջ տասնօրյակ ցուցադրված մնացին Նկարիչների տանը, և արվեստասեր հասարակությունն առիթ ունեցավ դիտելու դրանք և հիանալու արվեստի հմայքոտ աստպարեզը մտած 26 նորահաս տաղանդների առաջին գործերով։ Բոլոր այդ գործերն արժանի են առանձին ուշադրության և հիացումի, բայց մենք մեկական բոպե կանգ կառնենք լավերի մեջ նրանց առջև, որ լավագույններն են մեր կարծիքով։

Մեծ հաջողության հասած ուշագրավ երկեր են հայ բոցաշունչ հասարակական գործիչ Սուրեն Սպանդարյանի կյանքից դրվագներ պատկերացնող երկու գործերը։ Առաջինը՝ «Ստալինը և Սպանդարյանը Տուրուխանյան աքսորում կարդում են Լենինի նամակը», գործն է Շանթ Հերթևցյանի։ Մինչև ամենահետին մանրամասնությունների խնամոտ նկարումով և արտահայտչությամբ,

ստացվել է մի հոյակապ ամբողջություն, որը պատիվ պիտի բերեր երկար տարիների ստաժ ունեցող որևէ նկարչի։

Նույն գործիչի կյանքից մի այլ դրվագ ներկայացնող մյուս կտավը՝ «Սպանդարյանը աքսորի ճանապարհին», գործ Քնարիկ Վարդանյանի, կարողացել է դեմքի և կեցվածքի մեջ արտահայտել Սպանդարյանի ամրակուռ, անընկճելի ոգին։

Շնորհալի կոմպոզիցիայով, գույների զգլխիչ շարադրությամբ, շրջապատող պեյզաժի թարմությամբ ու շքեղանքով, և կերպարների հարուստ արտահայտչությամբ աչքի է ընկնում Սուրեն Չիլինգարյանի «Մատղաշների խնամքը» անունը կրող գործը, որ ճանաչողության ու համակրանքի նուրբ և միաժամանակ պիրկ և ուժեղ թելերով մեզ կապում է հայրենի հրաշալի բնության հետ, այդ բնությունը ոգևորող և շնչավոր ու կենդանի դարձնող մեր առաջավոր կոլխոզնիկների հետ։

Իրավամբ «Անընկճելին» անունն է կրում Ղուկաս Զուբարյանի արձանը, որը դինամիկ գծերով կարողացել է ներկայացնել թշնամիներից գերված, բայց խրոխտ հոգով և հաղթապանծ կեցվածքով ռուս մարտիկ աղջկան։

Շրջանավարտ Աննա Պարոնյանի գործի թեման, նույնպես մեր առաջավոր գյուղատնտեսության աշխատանքային առօրյայից է վերցված։ «Մեծ պարգևի լուրը». ահա այսպես է կոչվում այդ ակնապարար խոշոր յուղանկարը։ Գլխավոր տիպարի բնատիպը աշխատանքի հերոսուհի Սիրանուշ Ումուրշատյանն է, որի ընկերուհիներից մեկը, հենց աշխատանքի եռուն պահին ստացած մայրաքաղաքից հասած թերթը, Սիրանուշին ավետում է, թե պարգևատրվել է. ոչ միայն պարգևատրված հերոսուհու, այլ նաև նրա ընկերուհիների դեմքի վրա արտացոլվում է այդ լուրի պատճառած հրճվանքը։ Քիչ անգամ կերպարվեստագետներին հաջողվում է այնքան խիտ ու զուսպ «խոսք»երով, այնքան շատ ոան ասել, այնքան խորհրդածություններ առիթ հանդիսանալ։

Կայսիչի վրա աշխատող՝ ընդամենը երեք կոլխոզնիկուհի, երեք կերպար պատկերող այդ նկարը շատ է պերճախոս արդարև։ Ի՞նչ է ասում նա, վառ, պայծառ և գրավիչ կոլորիտով այդ նկարը։ Դինամիկ, աշխույժ շարժումներով, կայտառ ու կենսաթրթիռ այդ գեղջկուհիների կերպարները հայտնում են, թե ի՛նչպիսի աշխատանքային եռանդով համակված են գյուղատնտեսության մեր աշխատավորները, նրանց զգեստավորումը և բովանդակ արտահայտությունը պատմում են մեզ այն մասին, թե շնորհիվ իրենց ազնիվ աշխատանքի, որպիսի՛ բարեկեցության են հասած մեր գյուղացիները։ Մի բոպե իր աշխատանքն ընդհատած և ծնկների վրա թերթը կրող կոլխոզնիկուհին խոսում է մեզ այն մասին, թե այժմյան հայ գյուղը տգիտության խավարի մեջ կորած հին հայկական գյուղը չէ, թե գյուղը քաղաքի հետ կապված է բազմաթիվ կուլտուրական կապերով, թե գյուղի աշխատավորի հետաքրքրության հորիզոնները ընդարձակված են անհունապես։ Գլխավոր կերպարի ընկերուհիների դեմքին ցոլացող գոհունակ ժպիտները խոսում են այն մասին, թե ընկերոջ հաջողությունը ինչքա՛ն սրտաբուխ ուրախություն է պատճառում, թե անցյալում գյուղացիներն իրար դեմ լարող նախանձի և ատելության փոխարեն, այժմ կա փոխադարձ սեր և օգնություն։ Փոխված է հայ գյուղացու ոչ միայն կենցաղը, այլ և հոգին։

Քաղաքի և գյուղի միջև սերտ կապի և գործակցության մեկ պատկերումն է նաև Հ. Հովսեփյանի «Պատվերը կատարված է» մեծ կտավը։ Գործարանը պատրաստել է տրանսֆորմատորը, որ լույս պիտի տա գյուղին։ Կոլխոզի նախագահը կոլխոզի սեփական ավտո-մեքենայով եկել է փոխադրել այն, շնորհակալություն հայտնելով պատվերը կատարած գլխավոր ինժեներին։ Վարպետորեն տրված են գործարանի միջավայրն ու մթնոլորտը, միմյանց օժանդակող քաղաքի և գյուղի աշխատավորների հոգեկան բավարարվածությունը։

Ստեղծագործական արդյունավոր ուղի անցած մեր տաղանդավոր կերպարվեստագետների բազմանդամ ընտանիքի մեջ ընդգրկվում են ահա 26 նորահասներ, ոչ ապահովապես պիտի կատարեն նորանոր նվաճումներ արվեստի բնագավառում, ի փառս տաղանդավոր և ստեղծագործ հայ ժողովրդին։